

Ֆլաման Անտոն Գոնզալէն և ասպետ Արվիօ: Բայց այս աւանդութեան հակառակ՝ ուրիշ տեղեր փնտոնցին Մամբրէի Հովիտը կամ Աբրահամու բեւեկնին: ԺԹ. դարու պաղեստինագէտները ընդհանրապէս կը համաձայնին Րամէզ-էլ-Սալիլի մասին. եթէ անոնք ամէնքն ալ չեն նոյնացներ այս տեղը Աստուածաշունչի Մամբրէի հետ, բայց զոնէ համաձայն են հոն գնելու Աբրահամու բեւեկնիին սրբավայրը:

Այս աւանդութեանց մասին անկատար գաղափար մը տուած պիտի ըլլանք, եթէ Միջին դարուն ծնունդ առած այս տեղւոյն վերաբերեալ աւանդութիւնները գանց ընենք:

Սիրսիք Սիսրայի կաղնիկները. — Է. դարէն մինչև ԺԲ. դար թանձր ստուեր մը կը սաւառնի Մամբրէի պատմութեան վրայ: Վիլլիպալտ (723-726) ուխտի դացած է Քերրոն և Castellum Aframia անուամբ կը յիշատակէ զայն: Abramium Ե. դարուն կը նշանակէր Քերրոն: Բեռնարդոս և Եպիփան չեն այցելած այս քաղաքը: Արաբ աշխարհագիրներ այլևս Մամբրէով չեն հետաքրքրուիր. անոնք ցոյց կուտան Քերրոնի մէջ նահապետներու շիրիմները և երկրին բնական հարստութիւնները: Քերրոնի շրջականերու տեղագրութիւնը ու աւերակները կը յայտնեն թէ այդ կողմերը քրիստոնէական համայնքներ հաստատուած և գիւղեր կազմած են: Այս կողմերը կը յիշատակուի տեղ մը՝ որ կոչուած է Երամնէի Ս. Կոյս Մարիամին գիւղը. վասընդի, ըստ աւանդութեան, սուրբ ընտանիքը Եգիպտոս փախչելու ժամանակ՝ գիշեր մը այս գիւղը կեցեր է: 1667ին Conzalès տեղւոյն կիսաւեր եկեղեցիին մէջ տեսած է որմանկար մը՝ որ նոյն տեսարանը կը